Heritage for a new urbanity: think differently; live differently

KYIV INITIATIVE
REGIONAL PROGRAMME
PILOT PROJECT
ON THE REHABILITATION
OF CULTURAL HERITAGE
IN HISTORIC TOWNS

A Joint Action of the
European Commission
and the Consil of Europe

ԿԻԵՎՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՊԻԼՈՏԱՅԻՆ
ԾՐԱԳԻՐ

Եվրոպական հանձնաժողովի և
Եվրոպայի խորհրդի
համատեղ գործողություն

Ժառանգություն նոր քաղաքային միջավայրի համար. մտածի՛ր տարբեր, ապրի՛ր տարբեր

EUROPEAN COMMISSION
COMMISSION EUROPÉENNE

COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

MINISTRY OF CULTURE OF RA

European Comission
Directorate General
for Education and Culture

http://ec.europa.eu/culture

Council of Europe
Directorate of Culture and
Cultural and Natural Heritage (DGIV)
Regional Co-operation Division

http://www.coe.int/kyev

Ministry of Culture of RA

http://www.mincult.am

EUROPEAN COMMISSION
COMMISSION EUROPÉENNE

COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

MINISTRY OF CULTURE OF RA



KYIV INITIATIVE
REGIONAL PROGRAMME
PILOT PROJECT
ON THE REHABILITATION
OF CULTURAL HERITAGE
IN HISTORIC TOWNS

ԿԻԵՎՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՊԻԼՈՏԱՅԻՆ
ԾՐԱԳԻՐ

Եվրոպական մարտահրավերներին դիմակայելու համար Տարածաշրջանային պիլոտային ծրագիր

“Պատմական քաղաքներում մշակութային ժառանգության վերականգնման պիլոտային ծրագրին” իրենց միասնական մասնակցությունը բերելով՝ Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան պարտավորվում են հետազոտել տեղական զարգացման նոր մոդելներ, որոնք ուղղված կլինեն քաղաքացիների բարեկեցության և քաղաքային կյանքի պայմանների բարելավմանը: 2009 թ. ի վեր, նախագիծը համատեղ իրականացնում են Եվրոպայի Խորհուրդը և Եվրահանձնաժողովը՝ որպես Կիևյան նախաձեռնության տարածաշրջանային ծրագրի մաս (www.coe.int/kyiv):

“Պատմական քաղաքներում մշակութային ժառանգության վերականգնման պիլոտային ծրագիրը” (www.coe.int/histown) միջազգային նախագիծ է՝ վառ արտահայտված տարածաշրջանային հատկանիշներով, որը քաղաքների վերափոխման գործընթացներին վերաբերող քննարկումների և որոշումների ընդունման բոլոր փուլերում ընդգրկում է հանրությանը, մասնավոր հատվածին և քաղաքացիական հասարակությանը: Նախագիծը ենթադրում է յուրաքանչյուր երկրում, ինչպես նաև տարածաշրջանում և ավելի լայն համատեքստում, շահագրգիռ տարբեր կողմերի միջև նոր գործընկերությունների հաստատում՝ խրախուսելով քաղաքի ինտեգրված մոդելի ձևավորումը և պահպանելով հավասարակշռությունը ժառանգության պահպանման, բարելավման և կայուն զարգացման պահանջների միջև:

Քաղաքի զարգացումը, որն ուղորդվում է “Պատմական քաղաքներում մշակութային ժառանգության վերականգնման պիլոտային ծրագրով” նախատեսված մշակութային ժառանգության պահպանման քաղաքականությամբ, միտված է գտնելու ուղիներ ակտիվացնելու համար քաղաքային զարգացումը՝ իրականացնելով նպատակաուղղված միջոցառումներ այն հատվածներում, որտեղ մշակութային ժառանգությունը վտանգված է: Գործընթացը մասնավորապես ուղղված է.

- բացահայտելու առկա մշակութային ժառանգության ռեսուրսները,
- կառավարելու ներկայիս սահմանափակումներն ու ճնշումները,
- ներմուծելու հանրային քննարկումների մոդելը՝ որոշումներ կայացնելու գործընթացներում,
- լավագույնս օգտագործելու առկա քաղաքային շրջանակը՝ արդիականության նոր որակ ներարկելու համար:

Պիլոտային ծրագրի նախնական փուլում 45 քաղաք է ընտրվել որպես “Միջամտության առաջնային թիրախ-քաղաքներ”՝ որոնք ներկայացնում են ողջ տարածաշրջանի մարդկային և մշակութային ժառանգության բազմազանությունը: Միասին վերցված, իրարից չափազանց տարբերվող այս քաղաքները ներկայացնում են մշակութային, սոցիալ և տնտեսական այն հիմնական մարտահրավերները, որոնց դիմակայում են մասնակից երկրները՝ մշակութային բազմազանությունը ողջունող քաղաքացիական և ընդգրկուն Եվրոպայի շրջանակներում:

Այնուհետ, նախագիծը կուղորդի շահառուներին “Պիլոտային քաղաքների” ընտրության հարցում, որոնք Գործնական Փուլի ողջ ընթացքում կլինեն թիրախային քաղաքները: Նշված քաղաքներում “Ժառանգության վերականգնման նախագծերը” կընտրվեն ըստ իրենց ներուժի՝ ներազդելու տեղական զարգացման վրա: Նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրությունները և բիզնես ծրագրերը կհանգեցնեն ազգային և միջազգային ֆինանսավորման մոբիլիզացման միջոցով ներդրումային և ներգրավվածության գործընթացներին՝ խրախուսելով նաև հանրային և մասնավոր ներդրումները:

Փորձի և հաջողված օրինակների փոխանակման միջոցով ամրացնելով բազմակողմ համագործակցությունը՝ “Պատմական քաղաքներում մշակութային ժառանգության վերականգնման պիլոտային ծրագիրը” կնպաստի նաև Եվրոպական կոնվենցիաների կիրառմանը՝ ժողովրդավարական մշակույթի ներմուծման և հաստատությունների կարողությունների ավելացման միջոցով:

Regional Pilot Project to Meet European Challenges

Participating together in the “Pilot Project on the Rehabilitation of Cultural Heritage in Historic Towns” Armenia, Azerbaijan, Georgia, Moldova, and Ukraine are committed to exploring new patterns for local development aimed at improving the welfare and the urban quality of life of citizens. This project has been jointly implemented by the Council of Europe and the European Commission since 2009 as part of the Kyiv Initiative Regional Programme (www.coe.int/kyiv).

The “Pilot Project on the Rehabilitation of Cultural Heritage in Historic Towns” (www.coe.int/histown) is an international project with a strong regional dimension that involves public and private sectors and civil society at all the stages of reflection and decision-making in town transformation processes. The project implies new partnerships and new relationships between the different stakeholders in each participating country, in the region and in wider context promoting an integrated model of the town, by maintaining a balance between the preservation of heritage, its enhancement and the requirements for sustainable growth.

The heritage-led approach to urban development implemented in the "Pilot Project on the Rehabilitation of Cultural Heritage in Historic Towns" looks at ways of reinvesting in the urbanity, by identifying targeted interventions on the historic heritage in degraded areas. This process will focus particularly on:

- enhancing available heritage resources,
- managing existing constraints and pressures,
- introducing public debate in the decision-making process,
- making the best of the existing urban fabric to foster a different kind of modernity.

During the Preliminary Phase of the Pilot Project forty five towns, reflecting the diversity of human and heritage resources of the whole region, have been designated as the first set of “Priority Intervention Towns”. Together these towns, all very different, represent the main cultural, social and economic challenges that the participating countries have to face, within the framework of a civic and inclusive Europe that embraces cultural diversity.

Then the project will guide the beneficiaries towards the selection of “Pilot Towns” to be the target throughout the Operational Phase. “Heritage Rehabilitation Projects” will be identified in these towns for their potential impact on local development. Feasibility Studies and Business Plans will lead to an investment and intervention process, through the mobilization of national and international funding, with a view to encouraging public and private investments.

Strengthening multilateral cooperation through the exchange of experience and good practices, the “Pilot Project on the Rehabilitation of Cultural Heritage in Historic Towns” also contributes to implementation of the European conventions through the promotion of a democratic culture and strengthening capacities of institutions.

Հայաստանի քաղաքաշինության պատմություն

Հայաստանի քաղաքաշինության պատմությունն իր արմատներով գնում է դեպի դարերի խորքը: Դեռևս նախնադարյան ժամանակաշրջանից պահպանված բնակատեղիների ուսումնասիրությունը թույլ է տալիս խոսել այդ շրջանում քաղաքաշինական նախնական սկզբունքների ձևավորման մասին: Հայաստանի տարածքում գտնվող բնակատեղիներից են նեոլիթյան, էնեոլիթյան, բրոնզեդարյան և երկաթեդարյան այնպիսի բնակատեղիներ, ինչպիսիք են Թեղուտը, Շերշ բլուրը, Շենգավիթը, Հառիճը, Այգեվանը, Մոխրաբլուրը, Սևանի ավազանի, Լոռիի, Շամշադինի, Իջևանի և Արագածի լանջերին գոյություն ունեցող բազմաթիվ ամրոցներ և բնակավայրեր:

3-րդ-2-րդ հազարամյակների բերդշեներում օգտագործված մոտեցումները միանգամայն կարող են համարվել քաղաքաշինական սկզբունքներ. բնական պաշտպանվածության տեսակետից տեղի ընտրությունը, ռելիեֆի օպտիմալ օգտագործումը, ամրոցի կառուցումը բարձր սարի կամ բլրի գագաթին, որը մինչև ստորոտը շրջապատվում էր 3-ից 7 պարսպապատերով : Թե միջնաբերդը, թե դրան շրջապատող մյուս բլուրներն ամրացված էին ինքնուրույն պարիսպներով, իսկ դրանց միջև գտնվող տարածությունը ծառայում էր որպես բնակատեղի: Բոլոր բլուրների և բնակատեղիի կապը միմյանց հետ ապահովված էր՝ այսպիսով ձևավորելով քաղաքաշինական երկմաս կառուցվածք:

Այս հստակ սկզբունքը փոխանցվեց Ուրարտական պետության /9-6 դդ. մ.թ.ա./ քաղաքաշինությանը: Պետության մայրաքաղաք Տուշպան /Վան/ , Մելիտենեն /Մալաթիա/. Արգիշտիխինիլին, Թեյշեբաինին, Էրեբունին և բազմաթիվ ալ քաղաքներ բաժանված էին ըստ վարչական, պաշտամունքային, ռազմական և արտադրական նշանակության, իրենցից ներկայացնում էին զարգացած, բարեկարգված, խիստ ամրացված քաղաքաշինական երկմաս կառուցվածքներ: Բացի քաղաքներից, գոյություն ուներ լրացուցիչ ամրոցների խիտ ցանց, որն իր հսկողության տակ էր պահում երկրի սահմանները՝ ապահովելով քաղաքների անվտանգությունը:

Անտիկ ժամանակաշրջանում Հայաստանը համարվում էր հելլենիստական մշակույթի կենտրոններից մեկը: Մ.թ.ա. 4-րդ –մ.թ. 2-րդ դարերում՝ տեղական ավանդույթների և հունա-հռոմեական արվեստի զուգակցման հիման վրա հայկական քաղաքաշինությունը մեծ վերելք ապրեց՝ պահպանելով հիմնական սկզբունքը, այն է, գետերով և խորը կիրճերով շրջապատված տեղանքի ընտրություն, միջնաբերդի բարձրադիր դասավորությունն ու փոխադարձ կապը բնակատեղիի ինքնուրույն հզոր պարիսպապատերի առկայությամբ: Ամբողջ այս պաշտպանական համակարգը լրացվում էր քաղաքը շրջապատող ջրով լցված խանդակներով ու հողաթմբերով: Այդ շրջանի քաղաքական բարձր զարգացում, հզոր պաշտպանական համակարգ ունեցող և բարձրարժեք ճարտարապետական շինություններով կառուցապատված քաղաքներից էին Արմավիրը, Երվանդաշատը, մեծ համբավ վայելող և Պլուտարքոսի կողմից <<Հայաստանի Կարթագեն>> անվանված Արտաշատը, Գառնիի ամրոցի համալիրը, Տիգրանակերտը, Վաղարշապատը և բազմաթիվ այլ քաղաքներ:

Քաղաքաշինական կառուցվածքով աչքի էին ընկնում վաղմիջնադարյան Հայաստանի քաղաքները՝ Դվինը, Կարինը, Արշակավանը, Նորակերտը և այլն/: Հիմնականում պահպանելով նախորդ շրջանների սկզբունքները, դրանք ձեռք են բերում նաև ժամանակաշրջանի թելադրած նոր հատկանիշներ՝ դառնալով եռամաս. միջնաբերդ, բուն քաղաք /կամ շահաստան/ և արվարձաններ: Միջնաբերդը հանդիսանում էր վարչառազմական միավոր, շահաստանը՝ հասարակական և գործարարական կենտրոն, արվարձաններում գտնվում էին բնակելի թաղամասերը, որտեղ բնակվում էին հողագործները, արհեստավորները և այլ աշխատավոր բնակչությունը: Քաղաքաշինական արվեստի կարևոր բաղկացուցիչներն էին քաղաքի

History of the Urban Development in Armenia

The roots of the history of the urban development in Armenia go back to the early ages. The study of primeval settlements enables to speak about formation of preliminary principles of urban development. There are many settlements of Neolith, Eneolith periods, Bronze and Iron Ages located on the territory of Armenia, such as Teghut, Shresh Hill, Shengavit, Harich, Aygevan, Mokhrablur, as well as Cyclopean fortresses and settlements around Lake Sevan, in Tavoush and Ijevan and on the slopes of Aragats Mountain.

The approaches used in the construction of fortresses from the 3-rd-2-nd millennia BC can be considered as urban development principles: the strategic choice of the location from a defense standpoint, the optimal usage of relief, the erection of fortress on the top of a hill or a mountain, surrounded by 3-7 fortification walls down to the bottom. The citadel and other neighbouring hills were protected by separate walls, and the territory in between used to serve as a settlements. There was a proper connection provided between the hills and the settlement, thus forming a two-part urban structure

This distinct urban structure was passed on to and was extensively used by the Kingdom of Urartu (9-6 Centuries BC). Its capital Toushpa (Van), towns like Melitene (Malatya), Argishtikhinili, Teishebaini, Erebouni and many others were divided into/distinguished by their administrative, military and cult significance and were developed, well-built and heavily fortified two-part urban structures. Besides the towns, there was also a dense network of small castles and fortresses built across the state borders to control them and to provide protection for the towns.

In antiquity Armenia was one of the centers of Hellenic culture. From the 4th until the 2nd centuries BC, on the base of the local traditions and development of the Greco-Roman art, the urban development in Armenia made a fast headway, meanwhile keeping the main principles intact, i.e. – choice of location strategically placed in between the rivers or ravines, elevated placement of the citadel, provision of the interconnections between the latter and the settlement, which was surrounded by strong fortification walls. This whole defensive system was completed by the moats and mounds around the town walls. The famous towns of that era, with well developed urban systems, defensive structures and highly valuable architectural buildings were Armavir, Yervandashat, Artashat (Artaxata) that was called by Plutarch «the Carthage of Armenia», Garni Fortress, Tigranakert, Vagharshapat and others.

Early Medieval Armenia towns also were distinguished by their urban structures, for example Dvin, Karin, Nprkert, etc. Preserving the main inherited principles, some new features had appeared, bearing the impact of that period – turning to tri-part structure: the citadel, as a military-administrative centre, the town proper or the «Shahastan», as the public and trade centre and the suburbs, where the ordinary population, artisans, farmers land other workers lived.

Important components of the urban engineering were the provision of public utilities, like water supply, sewerage, construction and maintenance of buildings etc. All this provide us with enough evidence to assume that towns were founded not spontaneously but with a careful consideration and planning.

The tri-part structure and other related urban principles have preserved and further developed throughout the 9-14th centuries. In this period we witness the powerful surge in towns' development that left its impact on the urban and architectural construction. Old towns like Dvin, Van, Karin and others were being reconstructed and renovated, and the new ones being built, like Ani, Kars, Kapan, Lori, etc. The citadel continues to remain the administrative centre with the Royal or Price palaces, cathedrals with auxiliary constructions. The main part of the town - «Shahastan» transforms to a main public, business and cultural centre, surrounded by churches, administrative, public and private buildings, hospitality houses (caravanserai), custom offices and living blocks, with squares and pawed streets and





տնտեսական՝ կոմունալ, և բարեկարգման հետ կապված համակարգերը, ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը, արտադրական շենքերի սպասարկման հարմարանքները և այլ կառույցները: Այս բոլորը խոսում է քաղաքի ոչ թե տարերային գոյացման, այլ կառուցումից առաջ կատարված հատակագծային աշխատանքների մասին:
Եռամաս քաղաքաշինական կառուցվածքը և մյուս սկզբունքները Հայաստանում պահպանվեցին նաև զարգացած միջնադարի ժամանակաշրջանում /9-14 դդ./: Այս շրջանը առանձնանում է քաղաքների հատկապես բուռն զարգացումով, ինչը մեծ դեր ունեցավ թե քաղաքաշինության, թե ճարտարապետական առանձին կառուցների կերպարների նորովի մեկնաբանման համար:
Վերականգնվում և զարգանում են քաղաքները /Դվին, Նախճավան, Վան, Կարին/, կառուցվում նորերը /Անի, Կարս, Լոռի, Կապան և այլն/: Միջնաբերդերը շարունակում են մնալ անառիկ տարածություններ, որտեղ տեղադրված էին թագավորական և իշխանական պալատները, եկեղեցիները և բազմաթիվ օժանդակ շինությունները /պահեստներ, բաղնիքներ, ջրավազաններ, դեպի գետը տանողգաղտնուղիներ և այլն/, շահաստանը՝ քաղաքի հիմնական մասը, դառնում է առևտրական հասարակական, գործարարական, և մշակութային կենտրոն, որը կառուցապատվում է եկեղեցական փառահեղ շենքերով, պալատական և վարչական շքեղ շինություններով, հյուրատներով ու բնակելի թաղամասերով, մաքսատներով, սալահատակված փողոցների ցանցով ու հրապարակներով, քաղաքն երկրի այլ վայրերի հետ կապող ինժեներական կառույցներով՝ կամուրջներով ու ճանապարհներով:
Օտարերկրյա նվաճողների լծի և պատերազմական գործողությունների պատճառով տեղ գտած երկարատև դադարից հետո 19-րդ դարում սկսվում է հայկական քաղաքաշինության նոր՝ կարևոր փուլ, որը կապված էր 1828 թ. Հայաստանի Ռուսաստանին միանալու հետ, քաղաքաշինական հայկական հին ավանդույթներին գումարվում են ռուսական քաղաքաշինական դպրոցի նվաճումները, ինչը բերում է Երևանի, Գյումրիի, Նոր Բայազետի, Գորիսի, Վաղարշապատի և այլ քաղաքների նոր հատակագծմանը:
Հայաստանի 20-րդ դար քաղաքաշինությունը նշանավորվեց քաղաքաշինական բոլորովին նոր՝ համաշխարհային ուղղություններին համահունչ և միաժամանակ ազգային մոտեցումներով, որոնք կապված են հայկական ժամանակակից ճարտարապետության հիմնադիր Ալեքսանդր Թամանյանի և նրա գործընկերների անվան հետ:
Այսօր՝ գլոբալիզացիայի պայմաններում, երբ արագընթաց փոփոխություններ են կատարվում կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում պատմական քաղաքների կերպարներում, հատկապես կարևոր է քաղաքների կենտրոնների վերականգնումը իրենց նախնական տեսքով՝ որպես ազգային ինքնության պահպանման կարևոր գրավական:

with engineering constructions such as roads and bridges connecting the town with the other settlements and the external world.
After a long interruption, caused by the constant wars and foreign domination a new era of urban development in Armenia begins in the early 19th century. In 1828, as a consequence of decades of wars between the Persian and Russian Empires, Armenia is being joined into the latter. The centuries old Armenian traditions have merged with the achievements of the well established Russian School of the urban construction resulted in rebuilding of Yerevan, Gyumri, Goris, Vagharshapat, Nor Bayazet and some other towns based on the new principles and new master plans.
The urban development in Armenia in 20th century was marked by completely new approaches, harmonizing the global trends with the best national traditions. All these are mainly connected with Alexander Tamanian, founder of the Modern Armenian architecture and his colleagues and followers.
Today in the era of Globalization we witness rapid changes not only in our everyday life, but also in the image of the historical towns. Therefore, it is a priority to maintain and restore the centers of these towns as an important component of preservation of our national identity.

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԶԳԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Կարելի է ասել, որ այսօր Հայաստանի պատմական քաղաքները Գյումրին, Էջմիածինը, Գորիսը և մյուսները հիմնականում հագեցված են քաղաքաշինական անհրաժեշտ ենթակառուցվածքներով: Միաժամանակ ուսումնասիրված են դրանց զարգացման դարավոր ընթացքը, հաշվառված և գնահատված են դրանցում կուտակված մշակութային ժառանգությունը, ստեղծված են ժառանգության ֆիզիկական պաշտպանության և քաղաքաշինական դերի ու նշանակության պահպանության իրավական հիմքերը, ինչպես նաև կազմված են դրանց զարգացման քաղաքաշինական մի շարք փաստաթղթեր: Այդուհանդերձ դեռևս չի կարելի ասել, որ ստեղծված են այդ քաղաքների կայուն զարգացման և բնակչության բարեկեցիկ կյանքի ապահովման երաշխիքներ:

Այդպիսի երաշխիքներ կարող են ստեղծվել բազմակողմանի և մանրամասն ուսումնասիրությունների արդյունքում քաղաքի ողջ ներուժի բացահայտման, պետական ու մասնավոր սեկտորների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության մասնակցությամբ այդ ներուժի նպատակահարմար օգտագործման համապատասխան մեխանիզմների մշակման և այդ մեխանիզմների կիրառման նպաստավոր դաշտի ստեղծման պարագայում:

Այսօր Հայաստանի պատմական քաղաքներում նման խնդիրների լուծման հաջողված փորձի և տնտեսվարության գիտելիքների ձեռք բերման կարիք է զգացվում:Այս առումով ժամանակին, շատ կարևոր և օգտակար է Հայաստանի մասնակցությունը <<Մշակութային ժառանգության վերականգնումը պատմական քաղաքներում>> պիլոտային ծրագիրը, որը Կիևյան նախաձեռնության տարածաշրջանային ծրագրի շրջանակներում իրականացվում է Եվրոպայի խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի կոմից համատեղ: Այդ ծրագրում ժառանգությունը դիտվում է որպես տնտեսական և սոցիալական կարևոր գործոն, իսկ ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է տեղային զարգացման նոր մոդելների ստեղծում, որոնք կխթանեն պատմական քաղաքների կայուն զարգացմանը և քաղաքացիների բարեկեցիկ կյանքի ապահովմանը:

NATIONAL FOCUS OF THE PILOT PROJECT

We can note that the historical towns of Armenia, such as Gyumri, Goris, Echmiadzin and others are sufficiently provided with the essential urban infrastructure. A centuries-long development of these towns has been well-researched, their historical and culture heritage has been enumerated and assessed, a legal basis for the physical protection, preservation and role in urban development has been created and a number of documents aimed at their development have already been drafted. However, at the moment it cannot be stated that necessary conditions for the sustainable development of these towns and well-being of their inhabitants have already been created.

Such guarantees can be provided only as a result of the multifaceted and detailed studies aimed at the disclosure of the entire potential of a given town, if corresponding mechanisms for purposeful utilization of that potential are developed with the participation of the state, private sectors and civil society and if the environment conducive for the work of these mechanisms is created.

Today, in the historical towns of Armenia there is a need to get experience in dealing with and handling the above-mentioned problems, an experience that is based on the studies of best practices, as well as managerial skills to direct such a kind of activities.

With this regard Armenia's participation to the "Rehabilitation of the Cultural Heritage in the Historical Towns" Pilot Programme, which is being implemented by the Council of Europe and the European Commission in the framework of the Kyiv Initiative is extremely useful, very important and timely. The program views cultural heritage as an important economic and social factor, while its implementation envisages creation of the new local models of development, which will facilitate sustainable development of the historical towns, eventually ensuring high-quality life for its inhabitants.

ՀՀ Լոռու մարզի Սանահին համայնք
Ծովի մակարդակից 1020 մ բարձրության վրա
Երևանից 1020 կմ հեռավորության վրա

Organización
de las Naciones Unidas
para la Educación,
la Ciencia y la Cultura

Ալավերդի
Սանահին թաղամաս

Դեբեդ գետի կիրճում հիմնված Ալավերդի քաղաքը ՀՀ հանքարդյունաբերության կարևոր կենտրոններից է: 1967 թ. քաղաքի կազմում, որպես առանձին թաղամաս, ընդգրկվել է միջնադարում իր վանքային համալիրով հայտնի Սանահին գյուղը, ինչի հետևանքով Ալավերդի քաղաքը ձեռք է բերել պատմամշակութային նշանակության գործառույթներ:
Սանահին թաղամասը գտնվում է Ալավերդի քաղաքի տարածքի հարավային մասում, Չաթին լեռան ստորոտին, Ալավերդի քաղաքից 180-200 մ բարձրության վրա և զբաղեցնում է 90 հա տարածք:
Սանահինը որպես բնակավայր գոյություն է ունեցել մինչև 966 թ. վանքային համալիրի հիմնումը: 11-12-րդ դարերին բնակավայրը դառնում է Կյուրիկյան թագավորների վարչական կենտրոնը, միաժամանակ՝ եկեղեցական թեմի եպիսկոպոսի աթոռանիստը: Վանքային համալիրում Գրիգոր Մագիստրոսի ճեմարանի առկայությունը, ուր ուսումնառությունից բացի պատրաստվում և բազմացվում էին ձեռագրեր, ինչպես նաև 1063 թ. կառուցված հարուստ գրադարան-մատենադարանը վկայում են այն մասին, որ Սանահինը եղել է նաև մշակութային, կրթական և գիտական կենտրոն:
Այժմ Սանահին թաղամասում բնակվում է 800 մարդ: Թաղամասը տեղի աշխարհագրական և բնական գործոններով պայմանավորված՝ ազատ հատակագծային և տարածական զարգացում է ունեցել:
Բնակավայրը հիմնականում կառուցված է 1-2 հարկանի շինություններով, որոնց գերակշիռ մասը երկթեք, կղմինդրյա տանիքով և դեպի հարավ կամ արևելք ուղղված երկարավուն փայտյա /երբեմն քանդակազարդ/ պատշգամբով բնակելի տներ են: Դրանք կառուցված են բեկյալ փողոցների վրա, որոնք հիմնականում տանում են դեպի բնակավայրի բարձրադիր մասում գտնվող հրապարակ: Հրապարակի հարավային կողմում 10-13-րդ դդ. կազմավորվել է բնակավայրին ու շրջակա լանդշաֆտին ներդաշնակող Սանահնի նշանավոր վանքային համալիրը: Այն իր կազմում գտնվող 123 հուշարձաններով 1998 թվականից ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:
Մշակութային ժառանգության ու պատմական միջավայրի վերականգնմամբ և օգտագործմամբ Սանահին թաղամասի, նաև Ալավերդի քաղաքի բնակչության կենսամակարդակի ու սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման և կայուն զարգացում ապահովելու համար կարևոր նշանակություն ունի տեղի աշխարհագրական նպաստավոր դիրքը, կլիմայական բարենպաստ պայմանները, ինքնատիպ լանդշաֆտը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված վանքային համալիրը, էկոլոգիկան մաքուր գյուղատնտեսական մթերքի արտադրության կազմակերպման ներուժը:



Alaverdi –
Sanahin district

Sanahin community of the Lori Marz of
the Republic of Armenia
Altitude: 1020 m. above sea level
Distance from Yerevan is - 179 km

The town of Alaverdi, situated on the banks of Debed River is one of the mining indusry centres of Armenia. Sanahin village, a medieval settlement famous with its Monastery Complex, was incorporated to Alaverdi as a separate district in 1967 thus providing the relatively modern town with rich historical-cultural heritage.
Sanahin District is situated at the foot of the Chatin Mountain, on the Southern limits of Alaverdi and occupies about a territory of 90 hectares.
As a settlement it existed long before 966 when the Monastery Complex was founded. Sanahin becomes the administrative center of the Kyurikian Kings in 11th and 12th centuries and, at the same time, the residence of the Bishop. The Seminary established by Grigor Magistros within the Monastery complex, where besides the theological studies and research manuscripts were being produced and copied, and also the famous library established in 1063 testify that Sanahin was also a very significant cultural, scientific and educational centre of its times.
Based on the natural and geographical factors Sanahin village had developed a free territorial planning system. It is built mainly with 1 or 2 storey buildings/houses, with tiled roofs and wooden decorated balconies facing to the South or East.

The buildings are situated on oblique streets leading to the square on the upper part of the village where the dominating structure is the Sanahin Monastery complex, harmoniously integrated to the surrounding landscape. The current population of Sanahin is about 800 inhabitants.
The Monastery complex, together with its 123 different monuments was included in the UNESCO's World Heritage List in 1998.
For the sustainable development of the region and the improvement of the social and economic conditions in Alaverdi and particularly in Sanahin district, the preservation, restoration and use of the cultural heritage, together with the favorable climatic conditions and natural landscape, could play an important role.

Աշտարակ

ՀՀ Արագածոտնի մարզի վարչական կոնտրոն
Ծովի մակերևույթից 1075 մ. բարձրության վրա
Երևանից 20 կմ հեռավորության վրա

Աշտարակը Հայաստանի պատմական վայրերից է, որը մատենագիր հայկական աղբյուրներում հիշատակվում է 9-րդ դարից՝ որպես գյուղաքաղաք: Քաղաքի հնագույն բնակելի հատվածը Բերդաթաղն է, որն իր անունը ստացել է կիկլոպյան ամրոցից:
Աշտարակի աշխարհագրական դիրքը բարենպաստ է հեռանկարային զարգացման համար: Այստեղով են անցնում միջպետական նշանակության մայրուղիները՝ հանգուցելով Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքները: Համայնքը ունի գիտաարտադրական մեծ պոտենցիալ՝ մարզում է գործում արևելյան Եվրոպայի և Միջին Արևելքի կարևորագույն աստղադիտարաններից մեկը՝ Բյուրականի աստղադիտարանը: Քաղաքի տնտեսության հիմքն են գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը: Աշտարակը, լինելով խաղողագործության, պտղաբուծության և գինեգործության դարավոր ավանդույթների կրող, հայտնի է իր անուշահամ գինիների և չոր մրգերի պատրաստմամբ:
Համայնքն ունի իր ուրույն ճարտարապետական դիմագիծը որում պատմամշակութային հուշարձանները հանդիսանում են ապագա գրագետ կառուցապատման գրավականը և թույլ են տալիս տեսնել զբոսաշրջության զարգացման համար լուրջ նախադրյալներ:

Ashtarak

Administrative Centre of the Aragatsotn Marz of the Republic of Armenia
Altitude: 1075 m above sea level
Distance form Yerevan is 20 km

Ashtarak is one of the oldest settlements in Armenia. The first written reference to it dates back to 9th century AD as a fortified small town. The most ancient part of Ashtarak is “Berdatagh” (Fortress quarter), the name deriving from a Cyclopean fortress nearby.
The favorable geographical location of Ashtarak is conducive to its development perspectives. Interstate highways pass through the town linking the capital Yerevan with two other biggest towns of Armenia - Gyumri and Vanadzor.
The Community has a big scientific-research potential, since one of the most important observatories in the Eastern European and Middle East area – the Byurakan Observatory, is situated in this region.
Ashtarak, being a bearer of centuries-old traditions of winegrowing (viticulture), fruit growing and wine making, is very famous with its wines and sun-dried fruit production.
The town has its unique architectural image. Reach cultural heritage and historical-architectural monuments not only provide a solid basis for the further urban development of Ashtarak but also serve as a prerequisite for the development of tourism.

ՀՀ Շիրակի մարզի մարզկենտրոն
Ծովի մակարդակից 1556 մ բարձրության վրա
Երևանից 126 կմ հեռավորության վրա

Գյումրի

Գյումրին Հայաստանի Հանրապետության մեծությամբ երկրորդ քաղաքն է: Այն գտնվում է Հայաստանի հյուսիս արևմուտքում, Ախուրյան գետի ձախ ափին: Քաղաքը ավտոճանապարհներով կապվում է Վրաստանի և Թուրքիայի հետ: Աշխարհագրական նման դիրքը մշտապես նպաստել է Գյումրու, որպես տնտեսական և մշակութային խոշոր կենտրոնի զարգացմանը:
Գյումրու հնագույն անվանումը Կումայրի է, որի մասին հիշատակված է Քսենոֆոնի <<Անաբասիս>> ստեղծագործությունում:
Քաղաքի բուռն զարգացման նշանակալից շրջանն է եղել 19-րդ դարը, երբ Ռուսաստանի կայսրության կազմի մեջ ներգրավվելուց հետո, այն դառնում է Հարավային Կովկասի խոշորագույն առևտրական, արդյունաբերական, մշակութային կենտրոն: Սովետական Միության ժամանակաշրջանում այն վեր է ածվում խոշոր տեքստիլ և սննդաարդյունաբերական քաղաքի: Գտնվելով 8-9 բալային սեյսմիկ գոտում՝ Գյումրին 20-րդ դարում երկու անգամ 1926 և 1988 թթ. ենթարկվել է աղետալի երկրաշարժերի: Վերջինը հիմնովին կործանեց քաղաքի բնակֆոնդը, կրթական ու մշակութային օջախները, արդյունաբերական համակարգը:
Գյումրին հադես է գալիս բազմադարյան հարուստ մշակութային ժառանգությամբ: Քաղաքում և շրջակայքում պահպանվել են միջնադարյան հայ ճարտարապետության փառահեղ կոթողներ: Սակայն Գյումրու մշակութային ժառանգության առանձնահատկությունը արժևորվում է 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում կառուցված հուշարձանների առկայությամբ: Քաղաքի դիմագիծը հանդիսացող այս հուշարձանները այսօր կազմում են քաղաքի պատմական միջուկը: Այս շրջանում կառուցված 1-2 հարկանի սև սրբատաշ տուֆե քաղաքատիպ բնակելի շենքերը աչքի են ընկնում ճակատների կատարման բազմազանությամբ և առանձնանում ճարտարապետական ուրույն ոճով:
Ներկայումս, 1988 թ. երկրաշարժի հետևանքների դանդաղ վերականգնումը, Թուրքիայի հանրապետության հետ միջպետական սահմանի և Գյումրի-Կարս երկաթուղու ու մայրուղու փակ լինելը խնդիրներ են առաջացնում՝ քաղաքի կայուն զարգացման համար: Սակայն, Կառավարության կողմից ներկայացված քաղաքը ռեգիոնալ նշանակության տեխնոքաղաքի վերակազմավորելու հայեցակարգի և <<Կումայրի>> պատմաճարտարապետական արգելոց թանգարանի վերագործարկման նախագծի իրագործումը՝ կխթանի քաղաքի տնտեսության և մշակութային տուրիզմի կայուն զարգացումը:

Gyumri

Administrative centre of the Shirak Marz of the Republic of Armenia
Altitude: 1566 m. above sea level
Distance from Yerevan is 126 km.

Gyumri is the second biggest town in Armenia. It is located in the Northwest of the country, on the left bank of Akhuryan River. Interstate highways connect the town with Georgia and Turkey, as well as with Yerevan and other towns and communities of Armenia. Favorable geographical location was always conducive to Gyumri's economic and cultural development throughout centuries.
The ancient name of Gyumri was Kumayri and with that name the settlement has been known since 2nd century BC.
The period of the rapid and substantial growth of the town has begun in mid 19th century, when the Russian Empire took the control over the South Caucasus region. Gyumri, then Alexandrapol, became on of the biggest economic, trade, cultural and military centers of the South Caucasus.
During the Soviet period Gyumri, renamed to Leninakan, maintained its cultural and economic signifcance, especially in the fields of textile industry and food processing.
Gyumri is located in a 8-9 magnitude seismic zone and in 20th century the town suffered twice from devastating earthquakes in 1926 and 1988. The latter one almost completely destroyed the town.
Gyumri has a rich cultural heritage that has been formed throughout the centuries. Some masterpieces from the medieval period are found in the town and in its vicinities. Nevertheless, the peculiar status that Gyumri enjoys with its heritage is thanks to its urban architecture of the period of mid 19th to early 20th centuries. The monuments that define the image of the town form the core of the historical centre of Gyumri. Buildings of that period are mainly 1-2 storey houses, from the black tuff stone, with distinct facades solutions and unique architectural style.
The challenges facing Gyumri are the slaw pace of the rebuilding and rehabilitation activities after the 1988 earthquake, the closed Armenia-Turkey border and as the result of the latter, the closed Gyumri-Kars railway and highway. It is a serious impediment for the sustainable development of the town.
Notwithstanding the existing problems and challenges the Government of Armenia, together with the local authorities is elaborating projects of rehabilitation of the ''Kumayri'' historical-architectural preserve-museum and establishment of a techno-park that could contribute to the further development of the economy and cultural tourism in Gyumri.

Գնիշիկ և Եղեգիս

ՀՀ Վայոց ձորի մարզ
Եղեգիս գյուղական համայնք
Ծովի մակերևույթից 1400 մ. բարձրության վրա
Երևանից 125 կմ հեռավորության վրա
ՀՀ Վայոց ձորի մարզ Գնիշիկ գյուղական համայնք
Ծովի մակերևույթից 2000 մ. բարձրության վրա
Երևանից 130 կմ հեռավորության վրա

Եղեգիսը և Գնիշիկը ունեն գեղատեսիլ բնություն, բնական լանդշաֆտներ, Էկոլոգիապես մաքուր միջավայր, վայրի բնության կայուն պահպանված ֆլորա և ֆաունա, պատմա-մշակութային մեծ ժառանգություն: Գյուղերի նպաստավոր աշխարհագրական դիրքերը, մեղմ կլիմայական պայմանները բարենպաստ գործոններն են,որ հնարավորություն են տվել դրանք մինչ օրս պահպանելու: Եղեգիսի և Գնիշիկի պատմամշակութային հարուստ անցյալը վկայում է, որ գյուղերը՝ այստեղ բնակեցված են եղել դեռևս մ.թ. 4-րդ,5-րդ դարերից: Պատմական Եղեգիս քաղաքը առաջին անգամ հիշատակվում է 9-րդ դարի 20-ական թվականներին՝ կապված արաբական արշավանքների հետ: Հատկանշանական է, որ քաղաքն ունեցել է հրեաներով, ասորիներով ու արաբներով բնակեցված երեք արվարձաններ. Պահպանվել են եբրայերեն, ասորերեն ու արաբերեն արձանագրություններով բազմաթիվ գերեզմանաքարեր, շինություններ, գտածոներ: Գյուղը նշանավոր է իր անառիկ Սմբատաբերդ ամրոցով, որը պատմական Հայաստանում կառուցված բերդերից ամենամեծն է /15 հա/, Օրբելյան իշխանների դամբարանով, Զորաց տաճարով, հրեական գերեզմանատնով, հին ջրաղացներով, հին բնակելի թաղամասերով, հարևան Հոստիկ քաղաքի պեղված թաղամասով:
Գնիշիկը իր պատմության ընթացքում մի քանի անգամ ավերվել և վերականգնվել է: Գյուղի ինքնատիպ ճարտարապետական ժառանգությունը իր մեջ ներառում է 39 հուշարձան, այդ թվում 2 եկեղեցի, բազմաթիվ խաչքարեր, տապանաքարեր, խոյեր և հազարաշեն տիպի տներ:
Եղեգիս և Գնիշիկ գյուղերի տնտեսության առաջատար ճյուղերը, անասնապահությունը և գյուղատնտեսությունն են: Բնակավայրերի պատմաազգագրական և մշակութային մեծ ներուժ պարունակող ինքնատիպ, սակայն դեռևս սակավ օգտագործվող ժառանգության վերականգնման և այն նաև զբոսաշրջության զարգացման նպատակով օգտագործելու դեպքում՝ էապես կփոխվեն Եղեգիսի և Գնիշիկի սոցիալ-տնտեսական պայմաններն ու մշակութային կյանքը:

Gnishik and Yeghegis

Village communities in the Vayots Dzor Marz of the Republic of Armenia, situated at 1400 m. and 2000 m. altitude respectively. Distance from Yerevan is 125-130 km.

Yeghegis and Gnishik have picturesque nature and natural landscapes, ecologically clean environment, well preserved wild flora and fauna and very rich historical and cultural heritage. Favorable geographic location of the villages and mild climate were the main factors that helped to preserve the natural and cultural heritage. Historical monuments of Yeghegis and Gnishik testify that those villages have been settled since IV-V centuries AD. We find the first written reference of Yeghegis in early IX century, related to the Arab conquest. The most significant fact is that Yeghegis had three neighborhoods populated by Jews, Assyrians and Arabs. Well preserved tombstones with inscription in Hebrew, Assyriac and Arabic were found in the area. Yeghegis was famous with its Smbataberd Fortress, which was one of the biggest (15 hectare) and impenetrable fortifications in Historic Armenia, with the burial vault of the Orbelian Princes, the Zorats Temple, the Jewish Cemetery, old mills and excavated Hastic district.
Throughout its history Gnishik was destroyed and rebuilt many times. The unique architectural heritage of the village includes some 39 monuments – 2 churches, many khachkars (cross-stones), tombstones and “Hazarashen” type houses.
Leading sectors of economy in those two villages are agriculture and stock-raising. It is worthy to mention that there is 0% migration.
Exploration and rehabilitation of the rich historical and cultural heritage of Yeghegis and Gnishik, as well as perspective development of tourism will significantly contribute to the improvement of social and economic conditions of the two communities.

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաք
Ծովի մակարդակից 1370 մ բարձրության վրա
Երևանից 240 կմ հեռավորության վրա

Գորիս

Գորիսը ՀՀ Սյունիքի մարզի հնագույն բնակավայրերից է, որը պատմական աղբյուրներում հիշատակվում է դեռևս 13րդ դարից: Այն հիմնադրվել է Վարարակն գետի ձախ ափին՝ բլուրներից, ձորերից, ժայռերից և քարանձավներից կազմավորված յուրահատուկ բնական միջավայրում, որտեղ, պաշտպանական նկատառումներից ելնելով, մարդիկ իրենց տները կառուցել են կոնաձև ժայռերի /քերծերի/ և քարանձավների մեջ: Այդ պայմաններում բնակավայրի թաղամասերը կազմավորվել են բնական արահետների շուրջը:
Ժայռափոր տների աստիճանական ընդլայնման և քանակի ավելացման հետևանքով 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած, Գլխավոր հատակագծի համաձայն, Գորիսը սկսում է զարգանալ գետի աջափնյա, բարձրադիր, հարթ տարածության վրա:
Երկրում ստեղծված նպաստավոր քաղաքական և տնտեսական պայմանների, ինչպես նաև տարածաշրջանում խճուղային ճանապարհաշինության ընդլայնման հետևանքով շրջակա քաղաքների միջև ստեղծված առևտրական ակտիվ կապերի շնորհիվ նոր Գորիսում շինարարական բուռն գործունեություն է ծավալվում: Փողոցների ուղղանկյուն հատակագծային ցանցի վրա ուրույն ճարտարապետությամբ կառուցվում են ներկայիս քաղաքի պատմական կենտրոնը ձևավորող 1-2 հարկանի բնակելի թաղամասերը, հասարակական կենտրոնը և վարչական, առևտրական ու հասարակական նշանակության շենքերը:
Կարճ ժամանակահատվածում 1885 թ. Գորիսը ստանում է քաղաքի կարգավիճակ և դառնում Զանգեզուրի գավառի վարչական և առևտրական կենտրոնը: 20-րդ դարի սկզբին Գորիսը շրջանցող Ջուլֆա-Երևան երկաթգծի կառուցմամբ քաղաքը սկսում է կորցնել իր մի շարք կարևոր գործառույթները: Չնայած այդ հանգամանքին առ այսօր քաղաքի աստիճանական զարգացման հետևանքով գրեթե 2-3 անգամ ընդլայնվել է նրա զբաղեցրած տարածքը և ավելացել կառույցների քանակը: Այդուհանդերձ, Գորիսի պատմական կենտրոնի ինքնության էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:
Գորիս քաղաքի մշակութային ժառանգության վերականգնման ու օգտագործման միջոցով նրա հետագա կայուն զարգացմանը, բնակչության կյանքի որակի բարելավմանն ուղղված ծրագրի իրականացման համար կարևոր նախադրյալներ են՝ քաղաքի նպաստավոր աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները, բնության բազմաթիվ հուշարձաններ ընդգրկող յուրահատուկ լանդշաֆտը, դարերի ընթացքում կազմավորված պատմամշակութային հարուստ ժառանգությունը և ազգային ինքնատիպ ավանդույթները, ինչպես նաև ինժեներական բոլոր ենթակառուցվածքներն ու գիտական ներուժը:

Goris

Town in the Syunik Marz of
the Republic of Armenia
Altitude: 1370 m. above sea level
Distance form Yerevan is 240 km.

Goris is on of the oldest settlements of Syunik region. First references to it go back to the the 13th century. The old settlement was founded on the left bank of Vararakn River, in a picturesque area surrounded with hills, rocks, caves and ravines. For defensive purposes dwellers used to built their homes by carving the nearby cone-shaped rocks and in the caves. The neighborhoods were formed along the natural paths connecting the caves.
Since mid 19th century the settlement started to grow rapidly and expand to the elevated wide plateau on the right bank of the river. The new master plan of Goris was adopted in 1850. Political and economic conditions of that period, as well as construction of the strategic regional road networks that fostered the trade relations were conducive to increase of the role of Goris as a town and to its further development. The town entered a very active phase of constructions particularly in 1870s. Goris officially received status of a town in 1885 and became the administrative and trade center of the Zangezur province of the Russian Empire. In this period many administrative, trade and public buildings were built that shaped the current unique image of Goris. Construction of unique-style traditional one-two-story houses, public, administrative and trade buildings across the rectangular-shaped street networks shaped the historical center of the town and the town center. With the construction of the Yerevan-Joulfa rail-road in the beginning of the 20th century, Goris has started gradually to loose many of its important functions. Despite that fact, Gois continued to grow and its population and the territory is currently 2-3 times bigger.
Historical center of the town hasn't been dramatically affected with those changes.
Favorable geographical location, climate and the unique natural landscape, as well as the rich cultural heritage and the well preserved local traditions, together with the existing infrastructure and human potential are the prerequisites for the sustainable development of Goris and improvement of social and economic conditions of the local population. Therefore the protection, restoration and use of the cultural heritage could play an important role.

Դիլիջան

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաք
ծովի մակարդակից 1258-1510 մ բարձրության վրա
Երևանից 66 կմ հեռավորության վրա

Դիլիջանը իր մեղմ բնակլիմայական պայմաններով Հայաստանի Հանրապետության բացառիկ բնակավայրերից է: Այն գտնվում է Աղստև գետի հովտում՝ շրջապատված Փոքր Կովկասի լեռնազանգվածներով: Քաղաքը բարեկարգ մայրուղով կապված է Երևան, Վանաձոր և Իջևան քաղաքների հետ: Իր բնաշխարհով՝ հարուստ անտառներով, ավելի քան 2 տասնյակ բուժիչ հանքային ջրերի աղբյուրներով, հանգստյան գոտիներով, յուրահատուկ բնության և մշակութային հուշարձաններով Դիլիջանը առաջին հերթին դիտարկվում է որպես հանգստի և առողջարանային գոտի:
Առաջին անգամ գրավոր աղբյուրներում Դիլիջան անունը հիշատակվում է ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենի ուղեգրություններում՝ 1666թ.: Սակայն քաղաքի հարակից տարածքում գոյություն ունեցող վանական համալիրները՝ Հաղարծնի վանքը/12-13-րդ դդ/, Գոշավանքը՝ /12-13 դդ/ , Մաթոսավանքը՝ /10-13դդ/, Ջուխտակ վանքը /11-13 դդ/, Ախնաբատի վանքը /11-րդ դդ/ Ախնաբատի կամուրջը՝ /11-րդ / , գյուղատեղիները, գերեզմանոցները և կոթողային հուշարձանները վկայում են, որ Աղստևի հովիտը բնակեցված է եղել դեռևս միջնադարում:
Դիլիջան քաղաքի ամբողջական կերպարի ձևավորման մեջ նշանակալից է 19-րդ դարի վերջին կառուցված ժողովրդական տների ճարտարապետության դերը: Այս շրջանում Թիֆլիսյան, ռուսական և դիլիջանյան տների հարդարման որոշ էլեմենտների սինթեզի արդյունքում ստեղծվել է ժողովրդական տների կառուցման <<դիլիջանյան ոճը>>, որին բնորոշ է երկթեք կղմինդրածածկ տանիքը, լայն գեղեցիկ ձևավորված փակ պատշգամբները և կրով սպիտակեցված պատերը:
Դիլիջանի տնտեսության գերակա ճյուղերն են մշակող արդյունաբերությունը, մասնավորապես հանքային ջրերի և սննդի արտադրությունը, ինչպես նաև տուրիզմը: Այժմ ՀՀ կառավարության կողմից իրականացվում է Դիլիջանը տարածաշրջանային ֆինանսական կենտրոն դարձնելու քաղաքականությունը, որի համաձայն քաղաքում արդեն ավարտին է հասցվում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի շենքի շինարարության աշխատանքները:

Dilijan

Town in the Tavoush Marz of the Republic of Armenia
Altitude: 1258-1510 m. above sea level
Distance from Yerevan is 66 km

Thanks to its mild climate and nature Dilijan is one of the exceptional settlements in Armenia. It is situated in the situated in the Valley of Aghstev River, surrounded by Pambak and Bazum mountain chains. The town is connected to Yerevan, major regional centers like Vanadzor and Ijevan through interstate highways and regional roads.
Dilijan through its temperate climate, favorable geographical location, economic potential and rich historical and cultural heritage has great potential to become a world class resort which will in turn improve the social and economic situation of its population and develop tourism in the country.
Dense forest, more than two dozens of mineral springs, the unique microclimate and rich cultural-historical and natural heritage make Dilijan a famous recreational and tourism destination.
Toponym Dilijan is mentioned for the first time in the records of the famous French traveler Chardain in 1666. But the existing neighboring monastery complexes Haghartsin (XII-XIII centuries), Goshavank (XII-XIII centuries), Matosavank (XIII century) and Joukhtak Vank (XIII century), Akhnabat bridge (XI century), ancient settlements and cemeteries testify that the Aghstev Valley has been inhabited since the early Middle Ages.
Dilijan through its temperate climate, favorable geographical location, economic potential and rich historical and cultural heritage has great potential to become a world class resort which will in turn improve the social and economic situation of its population and develop tourism in the country.
The architectural style of houses used in the late 19th century played a decisive role in formation of unique urban construction image of Dilijan. Through the synthesis of different elements of architectural styles used in Tiflis (current Tbilisi) and other parts of the Russian Empire the so- called “Dilijan Style” of construction of houses emerged with its peculiar features: tiled roofs, wide and nicely decorated closed balconies and external walls whitened by lime. The main sectors of the local economy are the processing industry, in particular food-processing and mineral water bottling, services and tourism.
The Government is implementing a project with an aim to turn Dilijan into a regional financial centre. One of the first steps of it - the construction of the Central Bank building is underway.

Organización
de las Naciones Unidas
para la Educación,
la Ciencia y la Cultura

Էջմիածին /Վաղարշապատ/

ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաք
Ծովի մակարդակից 870 մ բարձրության վրա
Երևանից 20 կմ հեռավորության վրա

Էջմիածին /Վաղարշապատ/ քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրում՝ Քասախ գետի ձախ ափին: Հնագույն դարերից սկսած մինչ օրս հանդես է գալիս որպես երկրի հոգևոր և մշակութային կենտրոն:
Մ. թ. 2-րդ դարի առաջին կեսին Վաղարշակ Ա թագավորը պարսպապատում է գեղատեսիլ Արարատ և Արագած լեռների հայացքների ներքո գտնվող Վարդգեսավան բնակավայրը և անվանում Վաղարշապատ:
163 թ. Վաղարշապատը հայտարարվում է Հայաստանի մայրաքաղաք: Այդ շրջանում բացի պարիսպներից, քաղաքը պաշտպանված էր նաև խորը խանդակով, ուներ մի քանի դարպասներ, իսկ ներկայիս Սուրբ Էջմիածին վանքային համալիրի տեղում էր գտնվում պարսպապատ միջնաբերդը և թագավորական պալատը:
Տրդատ Գ թագավորի օրոք Ամենայն Հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի ջանքերով 301 թ. Հայաստանում քրիստոնեությունն ընդունվեց որպես պետական կրոն՝ առաջինը լինելով աշխարհում:
Նույն թվականին հիմնադրվում է երկրի գլխավոր՝ Սուրբ Էջմիածին եկեղեցին և քրիստոնյա կույսերի նահատակման վայրերում կառուցվում են նրանց նվիրված մատուռներ: Այսպիսով, մայրաքաղաք Վաղարշապատը դառնում է նաև երկրի հոգևոր և մշակութային կենտրոնը: Քաղաքը բուռն զարգացում է ապրում հատկապես 7-րդ դարում, երբ Հռիփսիմե և Գայանե կույսերի մատուռների տեղերում կառուցվում են Հռիփսիմե (618 թ.), Գայանե տաճարները (630 թ.) և Զվարթնոցի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ տաճարը (642 թ.): Այդ կառույցները մեծ ազդեցություն են թողել տարածաշրջանի նմանատիպ շինությունների վրա:
Իր գոյության ընթացքում քաղաքը անկման և զարգացման բազմաթիվ փուլեր է ապրել: Նրա տևական զարգացումը վերսկսվում է 18-րդ դարի երկրորդ կեսից: Աստիճանաբար վերականգնվում և ընդարձակվում է վանքային համալիրը, որի կազմում հիմնվում է բարձրագույն տիպի դպրոց՝ Գևորգյան ճեմարանը, իր բազմաթիվ մասնաշենքերով: 20-րդ դարի սկզբին Վաղարշապատի գլխավոր փողոցները կառուցապատվում են 1-2 հարկանի աղյուսաշեն, փայտյա նախշազարդ պատշգամբներ ունեցող ինքնատիպ տներով: Դրանց վրա փառահեղորեն իշխում են հետաքրքիր ծավալներ և ուրվագծեր ունեցող եկեղեցիները: Մի քանի դիտակետերից համայնապատկերներն ընկալվում էին Արարատ և Արագած լեռների հետ ներդաշնակորեն միաձուլված:
1945 թ. Վաղարշապատը վերանվանվում է Էջմիածին: Քաղաքում մեծածավալ կառուցապատման աշխատանքներ են կատարվել 1960-1970 թթ., որոնք, սակայն, որոշ հատվածներում խախտում են Էջմիածնի հաջորդական ներդաշնակ զարգացման սկզբունքը:
Դարերի ընթացքում կազմավորված քաղաքի մշակութային ժառանգությունը համաշխարհային մշակութային ժառանգության կարևոր մասն է կազմում: Էջմիածին քաղաքի եկեղեցիները և Զվարթնոց հնագիտական վայրը 2001 թ. ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:



Echmiadzin /Vagharshapat/

Town in the Armavir Marz of the Republic of Armenia
Altitude: 870 m. above sea level
Distance from Yerevan is 20 km.

The town of Ecmiadzin /Vagharshapat/ is situated in the Ararat Valley, on the left bank of the Kasakh River. Since ancient times it has served as a religious and cultural centre for Armenia.
In the 2nd centiry AD King Vagharshak I (117-140) built fortification walls around Vardgesavan settlement, situated in the picturesque valley dominated by the magnificent Ararat and Aragats mountains and renamed it into Vagharshapat (the town of Vagharshak).Shortly after, in 163 Vagharshapat was declared as the capital of the Armenian Kingdom. Back then, the town had powerful walls, surrounded by moats, had several entrances, and on the site of the current St. Ejmiadzin Cathedral there was the fortified citadel and the Royal Palace.
King Trdat (Tiridates) III the Great with the efforts of Gregory the Illuminator declared Christianity as a State religion in 301 AD, thus making Armenia the first country in the world to do so. The same year the foundations of the Holy Echmiadzin Cathedral were laid, together with the chapels over the burial sites of Christian virgins Hripsime, Gayane and Shoghakat. The town had experienced unprecedented development and growth in the 7th century when the churches of St. Hripsime (618), St. Gayane (630) and Zvartnots (640) were built. These new constructions heavily influenced the future architectural style and structure of the churches not only in Armenia but in the whole region.
Throughout its history the town went through the phases of revival and decline. A new period of urban development has begun in the second half of the 18th century. The Monastery complex has been gradually reconstructed and enlarged, the new buildings, such as the Gevorgian Seminary and other auxiliary were built. In the beginning of the 20th century Vagharshapat was a town of mainly 1-2 storey clay and stone houses, with wooden decorated balconies, dominated by the Cathedral and other churches.
The town was renamed Ejmiadzin in 1945. Extensive construction and development works have been conducted in 1960-70s, which unfortunately in some parts have damaged the traditional harmonious urban structure of the town.
The rich cultural heritage of Ejmiadzin is an important part of the world heritage. The Ejmiadzin Cathedral, together with the other churches and the Zvartnots archeological site was included in the UNESCO's World Heritage List in 2001.



ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաք
Ծովի մակարդակից 625 մ բարձրության վրա
Երևանից 385 կմ հեռավորության վրա

Մեղրի

Մեղրին Հայաստանի հնագույն քաղաքներից է, պատմական Հայաստանի Արևիք գավառի բնակավայրերից մեկը: Ձբաղեցրած աշխարհագրական դիրքը մեծապես նպաստել է Մեղրու տնտեսության զարգացման վրա: Գտնվելով երկրի հարավում, Հայաստան-Իրան միջպետական և Հոյսիս-Հարավ մայրուղու վրա, քաղաքն ունի ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակություն է:
Մեղրիի տարածքը բնակեցված է եղել դեռևս Ք.ա. 3-րդ հազարամյակում, որի մասին վկայում են բնակավայրի տարածքում հայտնաբերված բրոնեդարյան գտածոները:
Լինելով տիպիկ լեռնային քաղաք՝ ուրույն բնությամբ, բաժանվում է կլիմայական ենթագոտիների՝ մերձարևադարձայինից մինչև ալպյան գոտի: Բնակլիմայական նման պայմանների ազդեցությամբ՝ քաղաքը ձեռք է բերել ուրույն ճարտարապետական կառուցվածք՝ համալրված եկեղեցական, ռազմական և քաղաքացիական բնույթի շինություններով: Այն ունի սանդղաձև կառուցապատում վերից վար՝ դեպի գետահովիտը:
Քաղաքը երիզող ժայռերին այսօր կանգուն են Մեղրաբերդի 6 աշտարակները, որոնք հորինվածքով 2 տիպի են՝ կլոր և ուղղանկյուն: Մեղրին բաղկացած է գետի 2 ափերի բարձրադիր լանջերին տարածված Մեծ և Փոքր թաղերից: Մշակութային ժառանգության տեսակետից առանձնահատուկ է Փոքր թաղի՝ 19-րդ դարում կառուցված քաղաքատիպ բնակելի տների ճարտարապետությունը՝ կամարակապ դարպասներով, փայտյա պատշգամբներով և ինքնատիպ պատուհաններով ու որմնախորշերով, ներքնատեքի յուրօրինակ հարդարմամբ, որում դրսևորվում է Մեղրու մշակութային ինքնատիպությունը: Քաղաքի ժողովրդական ճարտարապետությունը նաև արժեքավոր է նրանով, որ այստեղ պահպանվել են ոչ թե առանձին շենքեր, այլ բնակավայրի կառուցապատման մի մեծ հատված, որի պահպանումը խիստ անհրաժեշտ է ու հրատապ: Մեղրու տնտեսության գերակա ճյուղը գյուղատնտեսությունն ու մշակող արդյունաբերությունն են: Որոշակի կշիռ ունի էլեկտրաեներգիայի և մրգերի պահածոների ու հյութերի արտադրությունը:





Meghri

Town in the Syunik Marz of the Rebublic of Armenia
Altitude: 625 m. Above sea level
Distance from Yerevan is 385 km.

Meghri is a historical settlement and the southernmost town of Armenia. Its geographical location greatly influenced the economic development of the town. Situated on the Iran-Armenia interstate and the North-South highways Meghri has a big strategic and geo-political importance for Armenia.
The area has been inhabited since 3rd Millennium BC that is proved by many archeological excavations and findings of the Bronze and Iron Ages.
Being a typical mountainous town, with unique nature, Meghri is being divided into few climatic zones – from sub-tropical to alpine. These very climatic conditions influenced a lot the unique architectural construction and urban planning of the town with its worship, military-defensive and public buildings. The town has a staircase-like construction – from the mountains to the valley.
On the top of the surrounding rocky hills still stand the 6 towers of the ancient Meghri fortress, with two types of building technique – round and rectangular.
Meghri River divides the town into to parts – the Large and the Small Quarters. From the cultural heritage viewpoint one of the most significant achievements is the architectural style of the houses in the Small Quarter built in the 19th century, with arched gates, wooden balconies, peculiar windows and niches, and the specific interior design reflecting cultural uniqueness of the Meghri Region.
The urban architectural heritage of Meghri is significant, since here we have preserved not separately surviving buildings or houses, but an entire quarter and its further preservation is an urgent issue.
The leading sectors of Meghri's economy are agriculture and food-processing industry.

Նորատուս

ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղական համայնք
Ծովի մակարդակից 1995 մ բարձրության վրա
Երևանից մոտ 98 կմ հեռավորության վրա

Նորատուսը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Երևան-Գավառ-Վարդենիս հանրապետական նշանակության մայրուղու եզրին, գեղատեսիլ Սևանա լճի ափին՝ Գեղամա լեռների վեհաշուք համայնապատկերում: Նորատուսը պատմական Հայաստանի Սյունյաց աշխարհի Գեղարքունիք գավառի հնագույն բնակավայրերից է: Միջնադարյան ծաղկուն բնակավայրի մասին են վկայում գյուղի կենտրոնում Սյունյաց Սահակ իշխանի կողմից 9-րդ դարում կառուցված Սուրբ Աստվածածին և հարավ-արևելյան կողմում 13-րդ դարում կառուցված Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները: Որպես պատմական բնակավայր Նորատուսը առավելապես հանրահայտ է իր հին գերեզմանոցով, որտեղ կան չկրկնվող զարդամոտիվներով 9-19-րդ դարերի ավելի քան 600 գեղաքանդակ խաչքարեր և բազմաթիվ տապանաքարեր: Ձուղայի գերազմանոցից հետո Նորատուսի գերեզմանոցը դարձել է այն եզակի վայրը, որտեղ, ասես բնության բացօթյա թանգարանում, կարելի է առնչվել հայկական մշակութային ժառանգության ինքնության կարևոր մասը կազմող խաչքարային արվեստի գլուխգործոցներին:
Գերեզմանոցի դերը, նշանակությունը և հետաքրքրությունը դրա նկատմամբ էլ ավելի է մեծացավ երբ 2010 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունվեց Հայաստանի կողմից ներկայացված «Խաչքարի մշակույթը, խորհուրդն և խաչքարագործությունը» ոչ նյութական մշակութային արժեքի հայտը և այն ընդգրկվեց «Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում»:
Բնակավայրի հարուստ մշակութային ժառանգության նկատմամբ օրեցօր աճող հետաքրքրությունը պարտադրել է միջոցներ ձեռնարկելու ժառանգության վերականգնման և նպատակային օգտագործման ուղղությամբ: 2010 թ. ցանկապատվել է հին գերեզմանոցը, և սկսվել են Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնման աշխատանքները: Մարզային ծրագրերի շրջանակներում այժմ հիմնականում երկրագործությամբ և անասնապահությամբ զբաղվող համայնքը կազմում է տնայնագործության, ավանդական արհեստների վերականգնման և մշակութային ու ազգագրական տուրիզմի զարգացման ծրագրեր: Դրանց հաջող իրականացման դեպքում կստեղծվեն նոր աշխատատեղեր և կնվազի արտագնա աշխատանքը: Կբարելավվեն բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, հնարավորություններ կստեղծվեն բնակավայրի առափնյա տարածքների բարեկարգման, զբոսաշրջությանը սպասարկող ենթակառուցվածքների ընդլայնման և համայնքի կայուն զարգացման համար:

Noratus

Village community in the Gegharkunik Marz of the Republic of Armenia
Altitude: 1995 m. above sea level
Distance from Yerevan is 98 km.

Noratus is located on the Southern shore of Lake Sevan, at the foot of the Gueghama Mountain Chain. The important highway Yerevan-Gavar-Vardenis passes through the village.
Noratus is one of the oldest settlements of Armenia. As an evidence that in Middle Ages it was a vibrant and flourishing settlement is the St. Astvatsatsin (Holy Mother of God) church, built in the centre of the village by Prince Sahak of Syunik in 9th century, as well as the St. Gregory the Illuminator church, in the South-East part, built in 13th century.
But Noratus is most famous with its Old Cemetery, where more than 600 khachkars (cross-stones) carved with unique patterns and other tomb-stones are found. They date from 9-19th centuries. The Old Cemetery of Noratus is like a open museum, a rear site where one can get acquainted with the masterpieces of the Art of Khachkar, a unique feature of the Armenian Cultural Heritage.
The significance of the Noratus Cemetery and the interest towards it has grown rapidly since the UNESCO included the “Culture of Khachkar” in the List of the Intangible Cultural Heritage in 2010.
Protection, restoration and use of the heritage of Noratus are urgent issues. The Old Cemetery got a new fence in 2010 and currently the restoration works of the St. Astvatsatsin church are underway.
Regional development programmes adopted by the Government include projects aimed at the rehabilitation of the local craftsmanship traditions and development of cultural tourism in Noratus, a community whose main occupation has been agriculture and cattle raising.
Successful implementation of those projects could have a positive impact on the social-economic situation of the village by modernizing and enlarging local service and tourism infrastructure, creating new jobs and laying grounds for the sustainable development for the community and the region.

Օշական

ՀՀ Արագածոտնի մարզի Օշական գյուղական համայնք
Ծովի մակարդակից 850 մ բարձրության վրա
Երևանից 385 կմ հեռավորության վրա

Իր կառույցներով և բերքառատ այգիներով Օշականը Հայաստանի նշանավոր գյուղերից է դեռևս հնագույն ժամանակաշրջաններից սկսած: Այն եղել է արքայական ոստան Արտաշեսյան և Արշակունի թագավորությունների շրջանում: Գյուղի պատմաճարտարապետական ներկայիս կերպարը ձևավորվել է դեռևս 3-րդ դարից: Օշականի մասին առաջին գրավոր տեղեկությունները հանդիպում են 5-րդ դարում: Բնակավայրն ունեցել է կարևոր ռազմաքաղաքական նշանակություն, ինչի վառ ապացույցներն են, գյուղի կենտրոնում գտնվող, Դիդի Կոնդ բլրի ուրարտական ամրոցը, պեղված անտիկ դամբարանները և, Քասաղ գետի վրա կառուցված, միջնադարյան հնգաթռիչք կամուրջը: Այն իր պատմության ողջ ընթացքում բազմիցս հայտնվել է պատմական իրադարձությունների կիզակետում, ինչի մասին վկայում են հայ արվեստի փայլուն օրինակներ հանդիսացող կոթողները:
Օշականը հայերի համար սրբատեղի է, քանի որ այստեղ է թաղված հայ գրերի ստեղծող, հայալեզու դպրոցի հիմնադիր Մեսրոպ Մաշտոցը: Գյուղի կենտրոնում է գտնվում թաղածածկ դահլիճի տիպի Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, որը կառուցվել է 1875-1879 թթ., 5-րդ դարում հիմնադրված եկեղեցու տեղում: Օշականի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է, սակայն գոյություն ունեցող մշակութային ժառանգության գրագետ և նպատակային օգտագործումը կարող է ազդակ հանդիսանալ գյուղի սոցիալ-տնտեսական դաշտի ակտիվացման համար:

Oshakan

Village community in the Atagatsotn Marz of
the Republic of Armenia
Altitude: 850 m. above sea level
Distance from Yerevan is 25 km.

Oshakan has been an important settlement throughout the history of Armenia. Famous with its fertile soil and flourishing gardens it has been a Royal summer residence during the Artaxiad and Arsacid Dinasties (1st century BC-4th century AD). The current image of the village has been formed in 3rd century AC. The first written records about Oshakan date back to the 5th century AD.
The settlement had an important geo-strategic location. The ruins of an Urartian fortress are found on the top of the Didi Kond Hill, many Antic era crypts have been excavated in the area. One of the pearls of the medieval bridge construction in Armenia is the five-arched bridge over the Kasakh River in the middle of the village.
Oshakan is a holy site for the Armenians since here is the burial place of St. Mesrop Mashtots, inventor of the Armenian Alphabet and the founder of the Armenian School (404 AD). A basilica church was built over his tomb in the 5th century AC and the current church was erected in 1875 on the ruins of the former.
The core of the local economy is agriculture. At the same time, the targeted and proper use of the cultural heritage could trigger the development of the other sectors of economy with a tangible improvement of the social conditions.

Բրոշյուրը պատրաստվել է Կիևյան նախաձեռնության տարածաշրջանային ծրագրի՝ <<Պատմական քաղաքների մշակութային ժառանգության վերականգնման պիլոտային ծրագրի>> շրջանակներում

Հրատարակումն իրականացվել է ՀՀ մշակույթի նախարարության, Եվրոպական հանձնաժողովի և ԵԽ համաֆինանսավորմամբ: Նյութը պատրաստվել է ԵԽ համագործակցության արդյունքում՝ միջազգային և տեղական փորձագետների կողմից:

Արա Մարգարյան, Ազգային համակարգող
Արև Սամուելյան, Նախագծի համակարգող
Արտյոմ Գրիգորյան, Ծրագրի խորհրդատու
Գոհար Գրիգորյան, Համակարգողի օգնական
Անի Հովսեփյան, Ծրագրի մենեջեր

Դիզայներ՝ Ինեսա Ռևազյան

Լուսանկարները՝ Զավեն Սարգսյանի

Brochure is prepared in scopes of the component of the Kyiv Initiative Regional Programme – "Pilot Project on the Rehabilitation of Cultural Heritage in Historic Towns".

The publication is co-financed by the Ministry of Culture of Republic of Armenia, European Commission and Council of Europe. Material is prepared in coordination with the Council of Europe (Regional Cooperation Division, Directorate for Culture and Cultural and Natural Heritage) by the local and international experts:

Ara Margaryan,, National Co-ordinator
ArevSamuelyan, Project Co-ordinator
Artyom Grigoryan, Project Cunsultant
Gohar Grigoryan, Project Co-ordinator's Assistant
Ani Hovsepyan, Project Manager

Design by Inessa Revazyan

Photos by Zaven Sargsyan

KYIV INITIATIVE REGIONAL PROGRAMME
PILOT PROJECT ON THE REHABILITATION OF CULTURAL HERITAGE IN HISTORIC TOWNS

ԿԻԵՎՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ